ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Դր. ՆԱՉԱՊԵՏԵԱՆԻ

VII

Մայիսի 31-ին կայացաւ Թիֆլիսի արքունական թատրոնում ջութակահար Նալբանդեանի կոնցերտը։ Ներկայ եղող հասարակութիւնը մեծ էր—չնայած շոգերին։ Կոնցերտանտը շատ սիրալիր կերպով ընդունւեց հասարակութեան կողմից, որը և ստիպեց ծրագրից դուրս նուագել նաև մի քանի հիմնական պիեսներ, որոնց թւում Վիենեաւսկու «Լեգենդա»ն։ Նալբանդեանը Ղրիմեցի է ծագումով և իբրև ջութակահար առաջին տեղն է բռնում հայերիս մէջ, ինչպէս հայ երգիչների մէջ առաջինն է Շահլամեանը։ Շահլամեանի մասին իբր ամնորի, դեռ անցեալ տարի նրա կոնցերտների առիթով մենք յայտնել էինք նրա մասին մեր կարծիքը և դժբաղդաբար մեր ոչ գովասանական կարծիքը նրա երգեցողական ձիրքի մասին արդարացաւ. երկու-երեք ներկայացրած օպերաներից յետոյ, որոնք գրւեցին Պետերբուրգի արքունական թատրոնում մասնակցութեամբ Շահլամեանի—վերջինիս մերժեցին ընդունել կայսերական բեմի վրա հէնց այն պատճառով, որ նա զուրկ է երաժշտական հոտառութիւնից, ուրեմն և երգել իմանալուց, չնայած իւր միանգամայն հրաշալի ձայնին։ Եւ այս տեսակէտից պ. Նալբանդեանը կատարեալ հակապատկեր է ներկայացնում պ. Շահլամեանի հետ համեմատելիս. ամենից առաջ նա երաժիշտ է և ապա միայն մասնագէտ ջութակահար։ Այլ խօսքերով՝ Նալբանդեանը երաժշտական է, իսկ այս հանգամանքը ինքն ըստ ինքեան մեծ բան է։ Նա կատարում է պիեսները ճաշակով, դաշնակութեամբ, որ յատկութիւններ են լոկ երաժիշտ մարդկանց յատուկ, և այս է պատճառը, որ Նալբանդեանին մարդ ուրախութեամբ է լսում, թէև նրա խաղը չի թողնում արտակարգ տպաւորութիւն մեզ վրա։

Կոնցերտի ծրագիրը կազմւած էր գլխաւորապէս երգեցիկ (пѣвучій) բնաւորութիւն ունեցող կտորներից, որոնց թւում Վիենեաւսկու՝ «Անուրջքը»

Ռուբենշտայնի «Գիշեր»-ը, Գոդառ'ի «Օրօրը», թէև կային նաև կոնցերտային պիեսներ, այն է երկրորդ և երրորդ մասերը Մենդելսոնի կոնցեր-
տից և Վիենիաւսկու «Ֆաուստ» ֆանտազիան։

Արդէն այդ ծրագրից կարելի էր մօտաւորապէս գաղափար կազմել նրա վարպետութեան աստիճանի և առհասարակ նրա խաղի ժանրի մասին։ Նալբանդեանի մէջ միանգամայն բացակայ է խաղի փայլը, այսինքն այն, ինչ որ գերակշռում էր ջութակահարուհի Ջանոլլիի մէջ։ Հէնց այդ պատճառով այնպիսի կտորներ որպիսի են վերջին մասը Մենդելսոնի կոնցերտից և ամբողջ «Ֆաուստի» ֆանտազիան դուրս եկան մեր ջութակահարի մօտ վերին աստիճանի թոյլ և թողեցին շատ անախորժ տպաւորութիւն։ Ակնյայտնի էր որ ջութակահարը իւր ուժերից վեր բաներ էր խաղում։ Սորա հակառակ՝ Վիենիաւսկու «Լեգենդայի», և Վիեօտանի «Անուրջք»-ի նման պիեսները կատարեցին մեր ջութակահարի ձեռքով գրեթէ օրինակելի կերպով և հէնց այս պատճառով հասարակութիւնը նրան բազմիցս բեմ հրաւիրեց։

Ես ասացի՝ գ ր ե թ է օրինակելի կերպով այն հիման վրայ, որ նոյն իսկ այդ պիեսներում, որոնք ամենից մօտ են նրա խաղի ժանրին, կատարելու ժամանակ առաջ էին գալիս թերութիւններ այն մասերում, ուր հարկաւոր էր ապացուցանել տալ մատերի և դաստակի վարժութեան այսինքն տեխնիկական մասի։

Վերջ ես ասացի որ նրա խաղը չի անում առանձին տպաւորութիւն։ Ընդհանրապէս ես պէտք է նկատեմ որ կոնցերտների ժամանակ ջութակը, ինչքան էլ սա տարօրինակ երևայ, պակաս տպաւորութիւն է թողնում քան, դիցուք, դաշնամուրը։ Այս հանգամանքը առաջ է գալիս այն բանից որ ջութակային ռեպերտուարը շատ չքաւոր է և միակողմանի, և մասամբ էլ այդ կախուած է ջութակահար անձերից։

Բացի անման Վիենիաւսկուց և հռչակաւոր Սարազատէից, որոնց մէջ հաւասար կերպով զարգացած է և տոնը (այն ինչ հասարակ լեզուով կոչւում է «հոգի») և տեխնիկան,—ինձ չի պատահել լսել այնպիսի ջութակահարների, որոնք իրանց խաղով թողնէին խոր, հոգեզմայլ և կախարդիչ տպաւորութիւն։ Օրինակի համար Ջանոլլին։ Նրա տեխնիկան զարգացել է սարսափելի աստիճանի, նա խաղում է փայլուն կերպով, առանց որ և է դժուարութեան, գեղեցիկ ու շքեղ... Սակայն նրա կատարած կտորները մանաւորապէս այնքան չնչին են իրանց բովանդակութեամբ որ անկարելի է մեծ տպաւորութիւն ստանալ, քանի որ մեծ և խոր տպաւորութիւն ստանալը հնարաւոր է եթէ միայն պիեսը խորն է, իսկ այսպիսիները նա չի խաղում քանի որ իւր ջութակը զուրկ է տոնից և երգեցիկութիւնից։

Գալով Նալբանդեանին մենք կը տեսնենք որ նա պակաս տոն ունի

քան այդ երևում է առաջին անդամից. Նրա խաղի մէջ տոնը կամ հոգին արտայայտում են արուեստական կերպով, մեխանիկաբար. այն է մատների անդադար շարժումից և ճօճումից. և այն էլ դուք կը լսէք Նրա խաղացած բոլոր պիեսներում սկզբից մինչև վերջը, այնպէս որ այս արուեստականութիւնը վերջ ի վերջոյ սկսում է լոգնեցնել ունկնդիրներին.

Պէտք է ասած որ խաղալու այս ձևը նկատուած է Աուերի բոլոր աշակերտների մօտ. Հինգ տարի սրանից առաջ Թիֆլիսում էր Աուերի մի ուրիշ աշակերտ Դորակի՛ն որը խաղում էր պ. Նալբանդեանի նոյն այս ձևով.

Այս պատճառով Նալբանդեանի, Դորակու և ուրիշների խաղի մէջ նկատուում է մի ինչ որ ծանրութիւն, որից պէտք է աշխատել կարելին չափ ազատուել կոնցերտային ջութակահար դառնալու համար.

Պարոն Նալբանդեանը դեռ երիտասարդ է և կարող է կատարելագործուել և իւրացնել՝ առաջին—վիլտուոզ վարպետութիւն—մի յատկութիւն որ անհրաժեշտ է ապագայ ունենալ ցանկացող ջութակահարի համար, և երկրորդ—ձեռք քաշել խաղի չափազանց աֆեկտացիայից, արուեստականութիւնից.

Մայիս 31.